


Մասիսի երկրաշարժի մասին

Այս տարվա նոյեմբերի 4-ին, տեղական ժամանակով 22:53-ին (Գրինվիչի ժամանակով 18:53-ին) Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) սեյսմոլոգիական դիտացանցի կողմից գրանցվել է 3.2 մագնիտուդով երկրաշարժ: Նրա էպիկենտրոնը գտնվում է Հայաստանի տարածքում՝ Մասիս քաղաքից 7 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Երկրաշարժի հիպոկենտրոնը գտնվում է 5 կմ խորության վրա, իսկ ուժգնությունը էպիկենտրոնային գոտում կազմել է 4-5 բալ:

Սեյսմիկ ցնցումը գրանցվել է ՍՊԱԾ-ի Երևանի, Գյումրիի, Վանաձորի, Կապանի հեռաչափական և Ստեփանավանի, Գյումրիի, Գորիսի, Արարատի, Երևանի, Վարդենիսի տարածաշրջանային կայաններով, ինչպես նաև Գառնիում տեղադրված Համաշխարհային Գլոբալ Ցանցի IRIS կայանով: Երկրաշարժը զգացվել է Հայաստանի մի շարք բնակավայրերում, մասնավորապես Երևանում՝ 3-4 բալ ուժգնությամբ:


Երկրաշարժի էպիկենտրոնը հարում է Երևանյան ակտիվ խզվածքի գոտուն: Երկրաբանական տեսանկյունից այդ խզվածքը տարածվում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ: Այն ունի 300 կմ երկարություն և 80° - 90° անկման անկյուն, մակերեսում թույլ է արտահայտված, քանի որ մեծ տարածության վրա ծածկված է երիտասարդ ու ժամանակակից առաջացումների հզոր շերտախմբով: Ըստ երկրաֆիզիկական տվյալների, խզվածքը լավ է արտահայտված խորքային կառուցվածքում և աջակողմյան վերնետրկողաշարժ է (նկար 1): Երևանյան խզվածքին բնորոշ են թույլ և միջին ուժգնության երկրաշարժեր, որոնք տեղի են ունենում բավականին մեծ հաճախականությամբ:

Խզվածքի սեյսմիկ պոտենցիալը համեմատաբար փոքր է: Հայտնի առավել ուժեղ երկրաշարժն այս գոտում տեղի է ունեցել 1937 թվականի հունվարի 25-ին (մագնիտուդը $M=4.6$, ուժգնությունը $I=7.0$), որն ուղեկցվել է Փարաքար և Արգավանդ գյուղերում շենքերի մասնակի վնասվածությամբ: Այս գոտում երկրաշարժերի օջախները գտնվում են 5-ից 10 կմ խորության վրա:



Նկար 1. Մի հատված ՀՀ և հարակից տարածքների սեյսմոտեկտոնական մոդելի սխեմատիկ քարտեզից:

Վերլուծվել է Երևանյան խզվածքին հարող գոտու սեյսմիկ ռեժիմը: Ըստ տարիների երկրաշարժերի քանակական բաշխման հիստոգրամից (նկար 2) կարելի է եզրակացնել, որ նշված գոտու սեյսմիկ ակտիվությունը գտնվում է քանակական ֆոնի սահմաններում:



Նկար 2. Երևանյան խզվածքին հարող գոտու ըստ տարիների երկրաշարժերի քանակական բաշխման գրաֆիկ:

Այսպիսով, սեյսմիկ ռեժիմի հիմնական պարամետրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Մասիսի երկրաշարժը բնորոշ է այս գոտուն և օրինաչափ երևույթ է: Այս գոտում սպասվող երկրաշարժի ամենամեծ մագնիտուդը չի գերազանցի $M_{max}=5.5$ սահմանը, իսկ Երևանյան խզվածքի գոտու սեյսմիկ պոտենցիալը համեմատաբար փոքր է:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն